ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/291

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Խաչատրյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-8/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, օժանդակ նյութերի, պահեստամասերի, սարքավորումների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14617-2020 գրությամբ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.09.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2959-2020 գրության հիման վրա, 28.09.2020թ.-ին «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 25.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 25.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/291 համարի ծածկագիրը:

20.01.2021թ.-ին և 25.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.01.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.09.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/2959-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և սպորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման Պայմանագրի 2.1.7.1 կետերի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանությունը 2020թ. սեպտեմբերի 15-ին միակողմանի մասնակի լուծել է՝

1. Ա/Ձ Աբգար Ավետիսյանի հետ 28.12.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրին կից 16.06.2020թ կնքված համաձայնագիրը:

2. «Արմեն-Համիկ Եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ի հետ 04.12.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/8-1 գնման պայմանագրին կից N 1 համաձայնագիրը:

3. «Արարատ Սենդի Կոմբինատ» ՍՊԸ-ի հետ 26.02.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 գնման պայմանագրին կից 30.06.2020թ. կնքված համաձայնագիրը:

4. «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի հետ 21.05.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-8/4-5 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ Պայմանագրի և համաձայնագրերի լուծման վերաբերյալ գրությունները 17.09.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14617-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«30/06/2020 թվականին «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքվել է թիվ ԳՀԱՊՁԲ-8/4-5 ծածկագրով պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին

մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակայույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով որպես գնման առարկա է նշվել Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ /Xerox Versant 80 մեքենայի պահեստամաս Fuser belt module Assembly/, իսկ որպես տեխնիկական բնութագիր է նշվել «Պահեստամաս Fuser belt module Assembly՝ նախատեսված Xerox Versant 80 մեքենայի համար: Գործարանային փաթեթավորմամբ:»:

06/08/2020 թվականին «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից նշված պահեստամասը մատակարարվել է ՀՀ ՊՆ ԳԿ ՎՏ վարչության պահեստ:

Xerox Versant 80 մեքենայի պահեստամասը մատակարարման պահին լիովին համապատասխանել է պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին /հիմք՝ կից լուսանկարները/:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված ապրանքի ընդունումը և դրա դիմաց վճարումը մերժվել է առանց որևէ իրավական հիմքի:

ՀՀ պաշտպանության նախարարության 11/06/2020 թվականի N 1 արձանագրությամբ և 11/08/2020 N 01 եզրակացությամբ նշվում է՝ մեջբերում եմ. «....ստուգմամբ պարզվեց, որ մատակարարված վերը նշված Xerox Versant 80 մեքենայի պահեստամասը չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին մատակարարման պահին ապրանքը գործարանային փաթեթավորված չի եղել, տեղադրված է եղել օգտագործված տուփի մեջ, թաղանթի վրա առկա են եղել քերծվածքներ և բծեր, որոնց պատճառով պահեստամասը պիտանի չէ հետագա շահագործման համար:»:

Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Հայտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի կատարվել Պայմանագրի վերոգրյալ կետերով սահմանված պարտավորությունները, ավելին 11/08/2020 N 01 եզրակացության և 11/06/2020 թվականի N 1 արձանագրության մեջ անգամ հիշատակում չկա ապրանքի փոխարինման ողջամիտ ժամկետ տրամադրելու մասին, ավելին ոչ մի եղանակով ընկերությանը չի առաջարկվել ողջամիտ ժամկետում փոխարինել ապրանքը, եթե անգամ համարենք, որ ապրանքը ընկերության կողմից առաքվել է թերություններով:

Մատակարարման պայմանագրի կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի մատակարարը գնորդին հանձնի պայմանագրով նախատեսված ապրանքները, իսկ գնորդը դրանք ընդունի: Ընդ որում, պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու պարագայում ապրանքը հանձնելու պարտականությունը համարվում է կատարված, եթե ապրանքը փաստացի հանձնվել է գնորդին: Ինչ վերաբերում է գնորդի կողմից ապրանքն ընդունելուն, ապա այն ներառում է վերջինիս կողմից այնպիսի գործողությունների կատարում, որոնցով պետք է ապահովվի մատակարարված ապրանքները փաստացի տիրապետման ընդունելը, ինչպես նաև պարզվի ապրանքի համապատասխանությունը պայմանագրով նախատեսված պայմաններին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ այդ գործողությունների ծավալը կախված է ապրանքները գնորդին հանձնելու վայրից և այն եղանակից, որով պետք է իրականացվի հանձնումը:

06/08/2020 թվականին «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով սահմանված պահեստամասը մատակարարվել է ՀՀ ՊՆ ԳԿ ՎՏ վարչության պահեստ: Ընդ որում, մատակարարման պահին ապրանքը ամբողջությամբ համապատասխանել է սահմանված տեխնիկական պահանջներին, մասնավորապես ունեցել է գործարանային

փաթեթավորում, հետևաբար այդ ապրանքը ենթակա էր ընդունման գնորդի կողմից (տես համապատասխան լուսանկարները):

Ինչ վերաբերում է 11/06/2020 թվականի արձանագրության մեջ առկա այն արտահայտությանը, ըստ որի՝ «մատակարարված վերը նշված Xerox Versant 80 մեքենայի պահեստամասը չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին մատակարարման պահին ապրանքը գործարանային փաթեթավորված չի եղել, տեղադրված է եղել օգտագործված տուփի մեջ, թաղանթի վրա առկա են եղել քերծվածքներ և բծեր, որոնց պատճառով պահեստամասը պիտանի չէ հետագա շահագործման համար», ապա հարկ է արձանագրել, որ այն անհիմն է, քանի մատակարարի կողմից մատակարարվել է պատշաճ որակով ապրանք, իսկ թե մատակարարումից հետո ապրանքի հետ ինչ է տեղի ունեցել որևէ նշանակություն չունի սույն գործի համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսդրության տեսանկյունից նշանակություն ունի միայն հենց մատակարարի կողմից ոչ պատշաճ որակի ապրանք մատակարարելը: Այլ կերպ՝ եթե մատակարարի կողմից մատակարարվել է պատշաճ որակի ապրանք, ապա այդ ապրանքը ենթակա է ընդունման, իսկ եթե ապրանքը դեֆեկտներ է ձեռք բերել մատակարարումից հետո, ապա այդ դեֆեկտների համար մատակարարը պատասխանատու չէ:

Տվյալ պարագայում ներկայացված լուսանկարներից հստակ երևում է, որ Xerox Versant 80 մեքենայի պահեստամասը ունեցել է գործարանային փաթեթավորում, և նման պայմաններով այն մատակարարվել է ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան պահեստ: Ինչ վերաբերում է առկա բծերին, ապա հարկ է արձանագրել, որ դրանք արվել են արդեն այն բանից հետո, երբ մատակարարվել է ապրանքը: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ ՊՆ ներկայացրած լուսանկարներից մեկում առկա է ռեզակ, որով էլ բացվել է նշված տուփը և վնասվել է Xerox Versant 80 մեքենայի պահեստամասը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ այդ թերությունները հայտնաբերվել են մատակարարման պահին, ապա դա վիճելի է, քանի որ ապրանքը, մատակարարված լինելով 06/08/2020թ-ին, այդ եզրակացությունը և արձանագրությունը կազմվել են 11-ը օգոստոսի 2020 թվականին, ինչը նախ չի կարող վկայել «ողջամիտ ժամկետում» ապրանքի թերությունների մասին տեղյակ պահելու հանգամանքի մասին, և երկրորդ նշված արձանագրությունը կազմվել է ապրանքի մատակարարումից շուրջ 5 օր անց, որպիսի

պայմաններում վիճահարույց է մնում այն հարցը, թե արդյո՞ք նշված 5 օրերի կամ ապրանքը բացելու ընթացքում ապրանքը չի վնասվել գնորդի աշխատակիցների կողմից:

Ամփոփելով՝ գալիս ենք այն եզրահանգման, որ սույն գործով մատակարար «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ն մատակարարել է տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք, իսկ պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարությունը ոչ իրավաչափորեն մերժել է ապրանքի ընդունումը, ուստի առկա չէ իրավական և փաստական հիմք «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Նշված հիմնավորումների հիմքով փաստում ենք, որ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից չի խախտվել Պայմանագրով սպանձնած պարտավորությունների կատարումը, ուստի հաշվի առնելով վերոգրյալը խնդրում ենք ՀՀ պաշտպանության նախարարության գրությամբ նախաձեռնված «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջը մերժել:»:

4. <u>ՍՑ-LO-2020/291 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 21.05.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքի (1 հատ Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ (Xerox Versant 80 մեքենայի պահեստամաս Fuser belt module Assembly)) մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

iii. ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 30.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 2 փոփոխությունը (այսուհետ նաև՝ Փոփոխություն):

iv. Փոփոխության հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի մինչև 30.07.2020թ.-ը:

v. ՀՀ պաշտպանության նախարարության գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 11.08.2020թ.-ին կազմված եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ մատակարարված ապրանքը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

vi. 11.06.2020թ.-ին կազմված նյութատեխնիկական միջոցների վերադարձման մասին կազմված թիվ 1 արձանագրության (այսուհետ նաև՝ Արձանագրություն) համաձայն՝ 06.08.2020թ.-ին «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ ԳԿ ՎՏ վարչության պահեստ մատակարարված 1 հատ Xerox Versant 80 մեքենայի պահեստամասը չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին. մատակարարման պահին ապրանքը գործարանային փաթեթավորված չի եղել, տեղադրված է եղել օգտագործված տուփի մեջ, թաղանթի վրա առկա են եղել քերծվածքներ և բծեր, որոնց պատճառով պահեստամասը պիտանի չէ հետագա շահագործման համար, ուստի այն հետ է վերադարձվել «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.09.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4294 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 21.05.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 1 հատ Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ /Xerox Versant 80 մեքենայի պահեստամաս Fuser belt module Assembly/, սակայն մատակարարել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Հիմք ընդունելով թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.-ի սեպտեմբերի 15-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14617-2020 գրությամբ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար

պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 21.05.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքի (1 հատ Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ (Xerox Versant 80 մեքենայի պահեստամաս Fuser belt module Assembly)) մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում: ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 30.06.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով պետական գնման

պայմանագրի թիվ 2 Փոփոխության հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի մինչև 30.07.2020թ.-ը:

ՀՀ պաշտպանության նախարարության գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ 11.08.2020թ.-ին կազմված եզրակացության համաձայն՝ տրվել է բացասական եզրակացություն, քանի որ մատակարարված ապրանքը չի համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին: Իսկ արդեն կազմված Արձանագրությամբ 06.08.2020թ.-ին «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ ԳԿ ՎՏ վարչության պահեստ մատակարարված 1 հատ Xerox Versant 80 մեքենայի պահեստամասը հետ է վերադարձվել «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին, այն հաշվառմամբ, որ ապրանքը չի համապատասխանում պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին. մատակարարման պահին ապրանքը գործարանային փաթեթավորված չի եղել, տեղադրված է եղել օգտագործված տուփի մեջ, թաղանթի վրա առկա են եղել քերծվածքներ և բծեր, որոնց պատճառով պահեստամասը պիտանի չէ հետագա շահագործման համար:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.09.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4294 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 21.05.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 1 հատ Լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ /Xerox Versant 80 մեքենայի պահեստամաս Fuser belt module Assembly/, սակայն մատակարարել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Հիմք ընդունելով թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. սեպտեմբերի 15-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, թիվ «ԳՀԱՊՁԲ-20-8/4-5» ծածկագրով պետական գնման պայմանագրով Մասնակցի վրա դրված

պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուն, Մասնակցին տրամադրելով կազմված Եզրակացության և Արձանագրության օրինակները, տեղեկացնելով վերջինիս կողմից մատակարարված ապրանքի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին, չի տրամադրել ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ ապրանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ հաստատված համարել Պայմանագրի էական պայմանների խախտման մասին, ինչպես սահմանվել է Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով, և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր կլիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Ընդ որում, պետք է փաստել, որ Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք,

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Բացի այդ Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով սահմանված ակնհայտ անհնարինության հիմքով պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավակարգավորման կիրառման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում ակնհայտությունը, որը տվյալ դեպքում, Պատվիրատուի կողմից սույն գործի քննության ընթացքում չհիմնավորվեց:

Վերջինս չներկայացրեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց առ այն, որ Մասնակցի կողմից պայմանագրին համապատասխանող ապրանքի փոխարինումն ակնհայտ անհնար էր Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն Մասնակցին (կատարողին) չի տրամադրել ողջամիտ ժամկետ՝ անպատշաճ որակի ապրանքը Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում Պայմանագրին համապատասխանող ապրանքով անհատույց փոխարինելու համար, որպիսի պայմաններում խախտվել են Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետով սահմանված դրույթների պահանջները, ուստի նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14617-2020 գրությամբ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/291 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**